

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հուլիսի 1, 2008թ.

Նոր հրատարակություն. «Ս. Ներսես Շնորհալի, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինն առաջին անգամ լույս է ընծայել Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի Մատթեոսի Ավետարանի մեկնության աշխարհաբար թարգմանությունը: Այն կատարել է Սեդա Ստամբուլցյանը մեկնության Կ. Պոլսի 1825թ. հրատարակությունից: Գիրքը տպագրվել է «Արմեն և Նունե Սարգսյաններ» հիմնադրամի մեկենասությամբ:

Ս. Ներսես Շնորհալի Կաթողիկոսն այս մեկնությունը գրել է եպիսկոպոսության շրջանում Գրիգոր Գ Պահլավունի Կաթողիկոսի թելադրանքով: Աշխատանքն ամբողջական չէ. Ներսես Շնորհալին իր մեկնությունը հասցրել է մինչև Մատթեոսի Ավետարանի Ե գլխի 17 համարը: Չնայած անավարտությանը, մեկնությունն աչքի է ընկնում Ընդհանրական Եկեղեցու Հայրերի նույնանուն մեկնությունների վերաշարադրումով և հեղինակի սեփական մտածումներով: Ս. Ներսես Շնորհալին Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ անդրադարձել է նաև Տիրոջ մարդեղության վերաբերյալ Հայ Եկեղեցու որդեգրած դավանաբանական սկզբունքներին:

Աշխարհաբար թարգմանությունը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:
###